Գիտելիք, փորձ, ազդեցություն. J-PAL Europe-ի աշնանային դպրոցը՝ Դիլիջանում

29.09.2026

Սեպտեմբերի 23-25-ը Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվել է աշնանային դպրոց վերապատրաստման ծրագիրը՝ նախատեսված Հայաստանի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երիտասարդ հետազոտողների համար: Ծրագրի նպատակն է զարգացնել մասնակիցների հետազոտական կարողությունները և խորացնել նրանց գիտելիքները սոցիալական քաղաքականությունների և ծրագրերի արդյունավետության գնահատման մեթոդների վերաբերյալ: Ծրագրի ընթացքում J-PAL-ի հետ համագործակցող հետազոտողները հանդես են եկել դասախոսություններով, աջակցել մասնակիցներին և հետադարձ կապ տրամադրել նրանց հետազոտական նախագծերի վերաբերյալ:

Ծրագրի շրջանակում հանդես են եկել J-PAL Europe-ի հետազոտողներ Դիլնովոզ Աբդուրազակովան և Մարիախոսե Սիլվա-Վարգասը, ինչպես նաև J-PAL-ի հետ համագործակցող հետազոտողներ Քրիստոֆեր Փալմերը և Մարկ Գուրգանդը, որոնք ներկայացրել են պատահականացված վերահսկվող փորձարկումների վերաբերյալ իրենց աշխատանքները:

Աշնանային դպրոցի կարևոր բաղադրիչներից մեկը գործնական աշխատանքն էր: Այս երեք օրերի ընթացքում մասնակիցները ներկայացրել են իրենց գնահատման նախագծերը և ստացել հետադարձ կապ J-PAL-ի փորձագետներից ու մյուս մասնակիցներից: Ծրագիրն ավարտվել է մասնակիցների աշխատանքների ներկայացմամբ՝ հնարավորություն տալով կիրառել դասընթացի ընթացքում քննարկված մեթոդական մոտեցումները ընթացիկ հետազոտական նախագծերում: